կաններն ամենուն պարտքն է, որ սովրին ու կարդան և այլն։ Այն Հայերը, որոնք այսպէս օտարացած են համարեա արտաքուստ, նոքա դեռ պահում են իրենց մէջ Ս. Լուսաւորչի անուանը նուիրուած մատուռներ, խորաններ, եկեղեցիք, նորա տօնը կատարելիս նախատօնակին բոլոր ժողովրդով երգում են նորան նուիրուած հայերէն շարականները։ *

Այսպիսի անհուն ազդեցութեան շնորհն, անշուշտ, կը յարատևէ միշտ։ Ս. Լուսաւորչի զօրաւոր Աջը, որ դարեր շարունակ այդպէս կապած պահել է Հայոց սրտերն իրար հետ, ամէն ժամանակ, նոյն զօրութիւնը ցոյց տալով, կը ժողովէ իւր հոգևոր զաւակներին «մի և միակրօն» հօտ կազմելու և բաժանման ու վարատման վտանգներից զերծ պահելու մի բազմաչարչար նահատակ ժողովուրդ։

Կ. Կ.

* Ալթունեան Ար. Տեղեկագրութիւն Հայոց գաղթականութեան ողբ ի Մոլտո-վալաքիա, Հունգարիա եւ Լեհաստան։ 1877 Փոքչան։